

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2015թ.

Ավարտվող Տարվա Համար



ԵՐԵՎԱՆ 2016

Բովանդակություն


	Էջ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	3
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	4
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	5
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	7


Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն


31 դեկտեմբերի 2015թ.

(հազար դրամ)

	<i>Ծանոթ ագրույթ յուն</i>	<i>31 դեկտեմբեր 2015</i>	<i>31 դեկտեմբեր 2014</i>
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	518	1,009
Ոչ նյութական ակտիվներ	4	302	370
Հարկային ակտիվներ	5	172	165
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	6	2,962	19,275
		3,954	20,819
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ		2,416	1,892
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	638	6,790
Դրամական միջոցներ	8	7,282	4,041
		10,336	12,723
<i>Ընդամենը ակտիվներ</i>			
		14,290	33,542
<i>Սեփական կապիտալ և պարտավորություններ</i>			
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	9	100	100
Պահուստային կապիտալ	10	15	15
Կուտակված շահույթ		11,546	31,180
		11,661	31,295
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	2,629	1,449
Շահութահարկի գծով պարտավորություն		-	798
		2,629	2,247
<i>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</i>			
		14,290	33,542


 Ա.Բեգլարյան
 Գլխավոր տնօրեն





 Ա.Բեգլարյան
 Գլխավոր հաշվապահ

Վավերացման ամսաթիվ 30.03.2016թ


Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 7-ից մինչև 32-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	12	65,507	97,463
Վաճառքի ինքնարժեք	13	(40,550)	(64,668)
<i>Համախառն շահույթ (վնաս)</i>		<u>24,957</u>	<u>32,795</u>
Վարչական ծախսեր	14	(6,185)	(7,255)
Այլ	15	(5,825)	(6,324)
<i>Գործառնական գործունեությունից շահույթ (վնաս)</i>		<u>12,947</u>	<u>19,216</u>
Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում	16	(2,581)	(3,863)
Տարվա զուտ արդյունք		<u>10,366</u>	<u>15,353</u>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		<u>10,366</u>	<u>15,353</u>


 Ա.Բեգլարյան
 Գլխավոր տնօրեն




 Ա.Բեգլարյան
 Գլխավոր հաշվապահ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 7-ից մինչև 32-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

	Բաժնետիրական կապիտալ	Պահուստային կապիտալ	Կուտակված շահույթ/ (վնաս)	Ընդամենը սեփական կապիտալ
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	100	15,827	15	15,942
Շահաբաժիններ	-	-	-	-
Տարվա շահույթ (վնաս)	-	15,353	-	15,353
Ներքին շարժեր	-	-	-	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	15,353	-	15,353
2014 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	100	31,180	15	31,295
Շահաբաժիններ	-	(30,000)	-	(30,000)
Տարվա շահույթ (վնաս)	-	10,366	-	10,366
Ներքին շարժեր	-	-	-	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	-
Ընդամենը տարվա համապարփակ	-	10,366	-	10,366
2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	100	11,546	15	11,661

Խ.Բեգլարյան
Գլխավոր տնօրեն


Ա.Բեգլարյան
Գլխավոր հաշվապահ


Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 7-ից մինչև 32-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

հազար դրամ

	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից	79,561	105,705
Գործառնական այլ գործունեությունից	30,176	18,100
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	109,737	123,805
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Նյութեր, ապրանքների ձեռք բերման գծով	(4,125)	(6,039)
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	(32,893)	(39,268)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(16,159)	(15,639)
Վճարումներ բյուջե	(18,222)	(28,034)
Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ	-	(209)
Գործառնական այլ գործունեությունից ելքեր	(5,097)	(30,800)
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	(76,496)	(119,989)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	33,241	3,816
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Սեփական կապիտալի գործիքների թողարկումից	-	-
Ստացված վարկերից և փոխառություններից	-	-
Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր	-	-
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից	-	-
Վճարված շահաբաժիններ	(30,000)	(4,027)
Ֆինանսական այլ գործունեությունից ելքեր	-	-
Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր	(30,000)	(4,027)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(30,000)	(4,027)
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	3,241	(211)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	-	-
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	4,041	4,252
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	7,282	4,041


 Ս. Բեգլարյան
 Գլխավոր տնօրեն


 Ա. Բեգլարյան
 Գլխավոր հաշվապահ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 7-ից մինչև 29-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Պրոգրես-Աուդիտ» ՓԲԸ

2015թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Պրոգրես-Աուդիտ» Փակ Բաժնետիրական Ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է հիմնադիրների 15.03.2010թ.-ի թիվ 01 արձանագրությամբ:

Գրանցվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում՝ 2010թ. մարտի 22-ին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան (պետական գրանցման համարը՝ 264.120.08958, պետական գրանցման վկայական՝ 03Ա 087864, ՀՎՀՀ՝ 01012831):

Ընկերության հիմնադիրներն են ՀՀ քաղաքացիներ՝ Խաչիկ Ժորժիկի Բեգլարյանը և Արթուր Գրիշայի Կիրակոսյանը:

Ընկերության ստեղծման նպատակը՝ ինքնուրույն, իր ռիսկով տնտեսական գործունեություն իրականացնելը և այդ գործունեությամբ շահույթ ստանալը:

Համաձայն կանոնադրության՝ Ընկերության գործունեության հիմնական տեսակները են՝

- Աուդիտորական ծառայությունների մատուցում;
- Հաշվապահական ծառայությունների մատուցում;
- Գործարար խորհրդատվություն;
- Ֆինանսական գործունեության վերլուծություն:

Ընկերության կողմից իրականացվող գործունեության տեսակներից՝ ըստ ՀՀ օրենսդրության լիցենզավորման է ենթակա աուդիտորական ծառայությունների մատուցումը:

Լիցենզիա՝ ԱԾ N 081 «Աուդիտորական ծառայություններին իրականացման» տրամադրված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 2010 թվականի մայիսի 04-ին, թիվ 307-Ա հրամանի հիման վրա:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մամիկոնյանց 1ա, բն 21;

Ընկերության գործունեության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վազգեն Մարգարյան 26/3:

2015թ. աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 10 մարդ (2014թ.՝ 13 մարդ):

2. Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքով, բացառությամբ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնական ճանաչման պահին չափվում են իրական արժեքով:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույն կերպով է արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական էությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթով ներկայացված տեղեկատվությունն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Գրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է հազար միավորի ճշտությամբ:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կատարի կարևոր գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրությունները և գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ և փոփոխություններ ամբողջական ՖՀՄՄ-երում առ 31/12/2015թ.

ՖՀՄՄ 9 «Ֆինանսական գործիքներ»

ՖՀՄՄ 9-ի թողարկումը շատ լայնածավալ ծրագիր է, որի թողարկման ամսաթիվ է համարվում 2009թ.-ի նոյեմբերը: Սկզբնապես ներկայացված էին միայն ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վերաբերյալ նոր պահանջներ: 2010թ.-ի հոկտեմբերին ՖՀՄՄ 9-ի բովանդակությունը լրացվեց ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման, ինչպես նաև ֆինանսական գործիքների ապաճանաչման վերաբերյալ պահանջներով: Այնուհետև 2013թ.-ի նոյեմբերին ՖՀՄՄ 9-ում ներառվեցին նաև հեջավորման հաշվառման վերաբերյալ նոր պահանջները: 2014թ.-ի հուլիսին թողարկվեց ՖՀՄՄ 9-ի վերջնական վերանայված տարբերակը, որը ներառում է նաև ֆինանսական ակտիվների արժեզրկման վերաբերյալ նոր պահանջները, ինչպես նաև լրացնում է ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման պահանջները՝ ավելացնելով պարտադիր իրական արժեքով հաշվառվող և այլ համապարփակ ֆինանսական արդյունքներով վերաչափվող պարտքային գործիքների դասը:

ՖՀՄՄ 9-ի վերջին թողարկված տարբերակը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և փոխարինում է ՀՀՄՄ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ստանդարտին: Թույլատրվում է ՖՀՄՄ 9-ը ամբողջությամբ կիրառել պարտադիր ժամկետից շուտ: Նաև թույլատրվում է վաղաժամկետ կիրառել ՖՀՄՄ 9-ը՝ բացառությամբ հեջավորման հաշվառման պահանջների և շարունակել կիրառել ՀՀՄՄ 39-ի հեջավորման հաշվառման պահանջները:

ՖՀՄՄ 14 «Կարգավորմամբ հետաձգված հաշիվներ»

2014թ.-ի հունվարին թողարկված ՖՀՄՄ 14-ը վերաբերում է այն հաշիվներին, որոնց ճանաչումը հետաձգվում է որոշակի իրավական ակտերի պահանջների կարգավորմամբ: Նման իրավիճակ կարող է առաջանալ հիմնականում որևէ պետական մարմնի կողմից կարգավորման ոլորտում գործող կազմակերպությունների մոտ: Սակայն ՖՀՄՄ 14-ը կիրառելի է միայն այն դեպքում, երբ կազմակերպությունը առաջին անգամ է որդեգրում ՖՀՄՄ-երը: ՖՀՄՄ 14-ը թույլ է տալիս առաջին անգամ ՖՀՄՄ-եր որդեգրող կազմակերպությանը շարունակել կարգավորմամբ հետաձգված հաշիվների հաշվառումը նախկին կիրառված մոտեցմամբ, որը կարող է տարբերվել համապատասխան ՖՀՄՄ-ի պահանջներից, և դրանք առանձին տողերով ներկայացնել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և շահույթ կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Պահանջվում են նաև լրացուցիչ բացահայտումներ ծանոթագրություններում՝ ներառյալ հետաձգման հետ կապված ռիսկերի բնույթն ու ազդեցությունը:

ՖՀՄՄ 14-ը ուժի մեջ է մտնում 2016թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»

2014թ.-ի մայիսին թողարկվել է ՖՀՄՍ 15-ը, որը ներկայացնում մեկ ամբողջական մոդել հաճախորդների հետ տարբեր պայմանագրերից հասույթի ճանաչման համար: ՖՀՄՍ 15-ը փոխարինում է ՀՀՄՍ-18 «Հասույթ», ՀՀՄՍ-11 «Կառուցման պայմանագրեր», ՖՀՄՄԿ-13 «Հաճախորդների հավատարմության ծրագրեր», ՖՀՄՄԿ-15 «Անշարժ գույքի կառուցման պայմանագրեր», ՖՀՄՄԿ-18 «Ակտիվների փոխանցում հաճախորդների կողմից» և ՄՄԿ-31 «Հասույթ. բարտերային գործարքներ, որոնք ներառում են գովազդային ծառայություններ» հրապարակումներին:

ՖՀՄՍ 15-ի հիմքում ընկած է այն սկզբունքը, որ ճանաչված հասույթը պետք է արտացոլի այն հատուցումը, որը ստանալու իրավունք ակրնկալվում է ունենալ փոխանցված ապրանքների և ծառայությունների դիմաց: Ստանդարտում ներկայացված է հասույթի ճանաչման հետևյալ 5 աստիճան սխեման.

Քայլ 1 – Որոշակիացնել հաճախորդի հետ պայմանագիրը (պայմանագրերը);

Քայլ 2 – Որոշակիացնել պայմանագրի կատարման պարտականությունները;

Քայլ 3 – Որոշել գործարքի գինը;

Քայլ 4 – Բաշխել գործարքի գինը կատարման պարտականություններին;

Քայլ 5 – Ճանաչել հասույթ ըստ կազմակերպության կողմից կատարման պարտականությունների կատարման:

ՖՀՄՍ 15-ը ուժի մեջ է մտնում 2018թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ 11 «Համատեղ պայմանավորվածություններ» համատեղ գործունեությունում մասնակցության ձեռքբերման հաշվառում

Այս փոփոխությունը պահանջում է, որ համատեղ գործունեությունում մասնակցության ձեռքբերման նկատմամբ կիրառվի ՖՀՄՍ3-ի ձեռնարկատիրական գործունեության ձեռքբերման մեթոդի հաշվառման պահանջները, ինչպես նաև ՀՀՄՍ36-ի գուղվիլի բաշխման և արժեզրկման պահանջները, եթե համատեղ գործունեությունը բավարարում է ՖՀՄՍ 3-ով նախատեսված ձեռնարկատիրական գործունեության սահմանմանը:

Փոփոխությունը կիրառվում է առաջընթաց, այսինքն կիրառելի չէ գոյություն ունեցող համատեղ գործունեություններում մասնակցության նկատմամբ, ինչպես նաև գոյություն ունեցող համատեղ գործունեություններում մասնակցության փոփոխության նկատմամբ: Բացառություն է համարվում նաև այն համատեղ գործունեությունում մասնակցությունը, որի ձեռնարկողները գտնվում են ընդհանուր վերահսկողության տակ:

ՖՀՄՍ 11-ի այս փոփոխությունը ուժի մեջ է մտնում 2016թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

Մաշվածության և ամորտիզացիայի մեթոդի ընտրության պարզաբանում (Լրացումներ ՀՀՄՍ 16-ում, և ՀՀՄՍ 38-ում)

Այս լրացմամբ պարզաբանված է, որ հիմնական միջոցների մաշվածությունը չի կարող հաշվարկվել ստաված/ստացվելիք հասույթների բազայով, իսկ ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի համար հասույթների բազան կարող է կիրառվել միայն շատ բացառիկ դեպքերում:

Լրացումը ուժի մեջ է մտնում 2016թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

Պտղատու բույսեր (Փոփոխություն ՀՀՄՍ 16-ում, և ՀՀՄՍ 41-ում)

Համաձայն այս փոփոխության պտղատու բույսերը չեն ներառվելու ՀՀՄՍ41-ի «Գյուղատնտեսություն» գործողության ոլորտում և համապատասխանաբար ներառվելու են ՀՀՄՍ16-ի «Հիմնական միջոցներ» գործողության ոլորտում: Այսինքն պտղատու բույսերի գծով պետք է գնահատել օգտակար ծառայություն, հաշվարկել մաշվածություն և հետագա չափումն իրականացնել սկզբնական արժեքի կամ վերագնահատված արժեքի մոդելով սկսած այն պահից, երբ պտղատու բույսերը կարող են բերք ապահովել: Այնուամենայնիվ փոփոխությունը չի վերաբերվում ստացված բերքի հաշվառմանը:

Փոփոխությունը ուժի մեջ է մտնում 2016թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՍ 27 «Առանձին ֆինանսական հաշվետվություններ» բաժնեմասնակցության մեթոդը առանձին ֆինանսական հաշվետվություններում

Այս փոփոխությունը հնարավորություն է տալիս առանձին ֆինանսական հաշվետվություններում ներդրումները դուստր ընկերություններում, ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում հաշվառել բաժնեմասնակցության մեթոդով: Այսպիսի հաշվապահական քաղաքականություն ընտրելիս կազմակերպությունը այն պետք է կիրառի հետընթաց:

Փոփոխությունը ուժի մեջ է մտնում 2016թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

Ակտիվների վաճառք կամ փոխադարձ ներդրում ներդրողի և ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման միջև (լրացում ՀՀՄՍ 28-ում և ՖՀՄՍ 10-ում)

Այս լրացումը պարզաբանում է, որ եթե ներդրողի և ասոցիացվածի կամ համատեղ ձեռնարկման միջև կատարված վաճառքի կամ փոխադարձ ներդրման առարկա հանդիսացող ակտիվը չի բավարարում ձեռնարկատիրական գործունեության սահմանմանը ըստ ՖՀՄՍ3-ի, ապա գործարքից օգուտը կամ կորուստը ճանաչվում է միայն չկապակցված ներդրողների բաժնեմասի չափով (այսինքն մնացած մասը որպես ներխմբային բացառվում է): Այս պահանջը կար նախկինում, ուղղակի չէր մատնանշվում այն, որ գործարքի առարկան չպետք է բավարարի ձեռնարկատիրական գործունեության սահմանմանը:

Եթե ներդրողի և ասոցիացվածի կամ համատեղ ձեռնարկման միջև կատարված վաճառքի կամ փոխադարձ ներդրման առարկա հանդիսացող ակտիվը բավարարում է ձեռնարկատիրական գործունեության սահմանմանը (օրինակ կարող է լինել անշարժ գույքի պարագայում), ապա օգուտը կամ կորուստը ճանաչվում է ամբողջությամբ:

Այնուամենայնիվ, սա վերաբերում է միայն վայրընթաց (ներդրողից ներդրման օբյեկտին) վաճառքի կամ ներդրման գործարքներին:
Լրացումը պարտադիր ուժի մեջ մտնելու ամսաթիվը դեռևս սահմանված չէ :

Ներդրումային կազմակերպություններ – համախմբման բացառության կիրառումը (Լրացումներ ՖՀՄՍ 10-ում, ՖՀՄՍ 12-ում և ՀՀՄՍ 28-ում)

Այս լրացման համաձայն, եթե կազմակերպության վերջնական կամ որևէ միջանկյալ մայր կազմակերպություն կազմում է հանրությանը մատչելի համախմբված ֆինանսական հաշվետվություն, ապա այդ ներդրումային կազմակերպությունը կարող է չկազմել համախմբված ֆինանսական հաշվետվություն նույնիսկ այն դեպքում, երբ վերջնական կամ միջանկյալ մայրը համարվում է ներդրումային կազմակերպություն և իր դուստր ընկերություններում ներդրումները հաշվառում է իրական արժեքով:

Լրացումը նաև պարզաբանում է այն, որ, եթե դուստր ընկերությունը մատուցում է ծառայություններ, որոնք վերաբերում են մայր կազմակերպության ներդրումային գործառնություններին, բայց դուստրն ինքնին չի համարվում ներդրումային կազմակերպություն, ապա կատարվում է դուստրի համախմբում և չի թույլատրվում իրական արժեքով չափումը:

Եթե ոչ ներդրումային կազմակերպության կողմից կիրառվում է ներդրման հաշվառման բաժնեմասնակցության մեթոդը ըստ ՀՀՄՍ28-ի այնպիսի ստացիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման նկատմամբ, որոնք համարվում են ներդրումային կազմակերպություններ և ըստ ՖՀՄՍ10-ի հաշվառում են իրենց դուստրներում ներդրումները իրական արժեքով, ապա այդ ներդրումները դիտարկվում են իրական արժեքով նաև ոչ ներդրումային կազմակերպություն հանդիսացող ներդրողի կողմից բաժնեմասնակցության մեթոդ կիրառելիս:

Նշված իրավիճակների համար ՖՀՄՍ12-ով պահանջվում է կատարել լրացուցիչ բացահայտումներ:

Լրացումը ուժի մեջ է մտնում 2016թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ5 «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակիվներ և ընդհատված գործառնություններ». Օտարման մեթոդի փոփոխությունը

Լրացումը վերաբերում է այն իրավիճակներին, երբ ակտիվը դադարում է որպես վաճառքի համար պահվող դասակարգման չափանիշներին բավարարել, բայց բավարարում է սեփականատերերին բաշխման համար պահվող չափանիշին, կամ ընդհակառակը:

Այս դեպքերում չի կիրառվում ՖՀՄՍ5-ով նախատեսված վերադասակարգման համար նախատեսված մաշվածության վերահաշվարկման և այլ պահանջները:

Լրացումը ուժի մեջ է մտնում 2016թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ7 «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ». Ծառայության պայմանագրեր

Լրացումը կապված է միայն այն իրավիճակների հետ, երբ կազմակերպությունը վաճառում է ֆինանսական ակտիվը, բայց ունի այդ ակտիվը սպասարկելու պայմանագիր: Եթե

սպասարկման պայմանագրի պայմաններն այնպիսին են, որ կազմակերպությունն ունի մասնակցություն փոխանցված ակտիվի ապագա արդյունքներում, ապա դա համարվում է շարունակվող ներգրավվածություն և կատարվում են ՖՀՄՄ7-ում նախատեսված համապատասխան բացահայտումները:

Լրացումը ուժի մեջ է մտնում 2016թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՄ19 «Աշխատակիցների հատուցումներ». Ձեռչման դրույք. Ռեզիդնալ շուկայի առանձնահատկությունները

Այս լրացումը վերաբերում է սահմանված հատուցումների պլանի հաշվառման նպատակով կատարվող ակտուարային գնահատականներում կիրառվող զեղչման դրույքի ընտրությանը: Որոշիչ է համարվում այն արժույթը, որով հաշվարկվում է հետաշխատանքային հատուցումը: Ուստի զեղչման դրույքը պետք է լինի համապատասխան արժույթով բարձրորակ կորպորատիվ պարտատոմսերի շուկայական եկամտաբերությունը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ պետական պարտատոմսերի շուկայական եկամտաբերությունը: Սա հիմնականում արդիական է, երբ տարբեր երկրների համար կիրառելի է նույն արժույթը:

Լրացումը ուժի մեջ է մտնում 2016թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՄ34 «Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ». Տեղեկատվության բացահայտումը որևէ այլ տեղ ֆինանսական զեկույցում

ՀՀՄՄ34-ի համաձայն միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում կազմակերպությունը կարող է չներառել որևէ տեղեկատվություն, եթե այն բացահայտված է ֆինանսական զեկույցի մեջ որևէ այլ տեղում: Այսպիսի դեպքերի համար սույն լրացումը պահանջում է միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունում ներկայացնել համապատասխան հղումներ ֆինանսական զեկույցի այլ տեղերին, որոնք պետք է հասանելի լինեն միջանկյալ ֆինանսական հաշվետվություն օգտագործողներին:

Լրացումը ուժի մեջ է մտնում 2016թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՄ1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը». Բացահայտումներ

Ա) Էականություն և միավորում

Կատարվել է պարզաբանում այն մասին, որ կազմակերպությունը չպետք է ներփակի օգտակար տեղեկատվությունը, ցուցանիշների առանձին ներկայացմամբ կամ միավորմամբ, և որ էականությունը հավասարապես վերաբերում է և հիմնական հաշվետվություններին և կից ծանոթագրություններին: Սա նշանակում է, որ որևէ ՖՀՄՄ-ով պահանջվող բացահայտումը պետք է կատարվի ծանոթագրություններում միայն այն դեպքում, երբ դա համարվում է հաշվետվություն օգտագործողների համար էական:

Բ) Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն և շահույթ/վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Կատարվել է փոփոխություն այն մասին, որ նշված հաշվետվություններում ներկայացման ենթակա պարտադիր տողային հոդվածներում կարող են կատարվել փոփոխություններ

տողերի միավորման կամ բաժանման ձևով՝ ելնելով էականությունից: Նաև կատարվել է լրացուցիչ պարզաբանում այն իրավիճակների համար, երբ կազմակերպությունը ցանկանում է ներկայացնել միջանկյալ հանրագումարներ:

Գ) Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներից առաջացող այլ համապարփակ եկամուտների և այլ համապարփակ ծախսերի ներկայացումը

Այս լրացումը պահանջում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում առանձին 2 տողերով ներկայացնել բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներից առաջացած այլ համապարփակ եկամուտներն ու ծախսերը: Դրանցից մեկում ներկայացվում է այն հոդվածների հանրագումարը, որոնք հետագայում չեն վերադասակարգվելու շահույթին կամ վնասին, իսկ երկրորդում այն, որոնք ենթակա են վերադասակարգման շահույթին կամ վնասին

Դ) Ծանոթագրություններ

Այս լրացումը կազմակերպություններին տալիս ավելի շատ ճկունություն ծանոթագրությունների կառուցվածքի վերաբերյալ: Այնուամենայնիվ ծանոթագրություններում ներկայացվող տեղեկատվությունը պետք է լինի կանոնակարգված, և ներկայացվում են որոշակի ուղեցույցներ կանոնակարգման վերաբերյալ:

Լրացումը ուժի մեջ է մտնում 2016թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

2.6 Նախորդ տարիների սխալների ուղղում

Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդ ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվությունը, ներկայացվում են այնպես, իբր էական սխալներն ուղղվել են այն ժամանակաշրջանում, որում դրանք կատարվել են: Հետևաբար, ներկայացված յուրաքանչյուր ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը ներառվում է այդ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մեջ: Ներկայացված ժամանակաշրջաններից ամենավաղ ժամանակաշրջանի կուտակված արդյունքների սկզբնական մնացորդը կարգավորվում է ճշգրտումների այն գումարով, որը վերաբերում է այն ժամանակաշրջաններին, որոնք նախորդում են վերջին ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների համադրելի տեղեկատվության մեջ ներգրավված ժամանակաշրջաններին: Նախորդող ժամանակաշրջանների վերաբերյալ ներկայացված որևէ այլ տեղեկատվություն նույնպես վերաներկայացվում է:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Ընդհանուր դրույթներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ) համաձայն:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները կիրառվել են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են, բայց դեռևս ուժի մեջ չեն մտել և վաղաժամ չեն ընդունվել Ընկերության կողմից, ներկայացված են ծանոթագրություն 2.5-ում:

Էական հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները, որոնք կիրառվել են ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ներկայացված են ստորև:

3.2 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀՄՄ 1. *Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում* ստանդարտի (վերանայված 2007թ.) համաձայն: Ընկերությունը որոշել է ներկայացնել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին մեկ հաշվետվություն:

Կազմակերպությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ներկայացնում է ակտիվներն ու պարտավորությունները ընթացիկ և ոչ ընթացիկ դասակարգմամբ: Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ծախսերը դասակարգվում են ըստ գործառույթի: Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը ներկայացվում է ուղղակի մեթոդով, իսկ շահաբաժինների գծով հոսքերը դասակարգվում են որպես ներդրումային գործունեությունից ներհոսքեր և ֆինանսավորման գործունեությունից արտահոսքեր:

3.3 Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար ֆունկցիոնալ արժույթից տարբերվող այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից հրապարակված՝ արտարժույթային շուկաներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 483.75 ՀՀ դրամ, 1 Եվրոն կազմում է 528.69 ՀՀ դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 474.97 ՀՀ դրամ, 1 Եվրոն կազմում է 577.47 ՀՀ դրամ, 2014թ. հունվարի 01-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 405.64 ՀՀ դրամ, 1 Եվրոն կազմում է 559.54 ՀՀ դրամ): Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հողվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես շահույթ կամ վնաս:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հողվածների մարման արդյունքում, կամ երբ Ընկերության դրամային հողվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնական գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

3.4 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Սկզբնական ճանաչման պահին հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով: Ձեռք բերված հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, տրանսպորտային ծախսումները, ինչպես նաև ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ծախսումները: Գործարկման և նման նախարտադրական ծախսումները հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում: Մեփական ուժերով կառուցվող հիմնական միջոցների սկզբնական արժեքը որոշվում է նույն սկզբունքներով, ինչ պաշարների ինքնարժեքը: Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, մինչև դրանց նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելը, հանդիսանում են անավարտ հիմնական միջոցներ և հաշվառվում են դրանց ինքնարժեքով:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրս գրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես շահույթ կամ վնաս:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, կապիտալացվում են տեղադրվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ միասին:

Ճանաչման նշված սկզբունքի համաձայն՝ կազմակերպությունը գնահատում է իր հիմնական միջոցների գծով բոլոր ծախսումները դրանց կատարման պահին: Այս ծախսումները ներառում են հիմնական միջոցի միավորի կառուցման կամ ձեռքբերման սկզբնավորման ծախսումները և հետագայում կատարված ծախսումները՝ կապված դրա ավելացման , մի մասի փոխարինման կամ սպասարկման հետ:

Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում՝ որպես շահույթ կամ վնաս:

Հիմնական միջոցների մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ ներառվում է այլ ակտիվի ինքնարժեքում՝ կիրառելով ուղիղ գծային մեթոդը, եթե մաշվածության հաշվարկման այլ մեթոդը չի ապահովում հիմնական միջոցի տնտեսական օգուտների նվազեցման ավելի արժանահավատ պատկերը:

Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Արտադրական և տնտեսական գույք
Այլ հիմնական միջոցներ

5 տարի,
5 տարի:

3.5 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվները ներառում են հաշվապահական հաշվառման ծրագիր, արտոնագրեր և այլն:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ ներառվում է այլ ակտիվի ինքնարժեքում՝ կիրառելով գծային մեթոդը՝ ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 5 տարի համակարգչային ծրագրի, 5 տարի արտոնագրերի և 10 տարի այլ ոչ նյութական ակտիվների համար:

3.6 Վարձակալություն

ա/ Գործառնական վարձակալություն - վարձակալությունը համարվում է գործառնական այն դեպքերում, երբ չի նախատեսվում սեփականության իրավունքից ծագող էական ռիսկերի և հատույցների փոխանցում վարձակալին: Գործառնական վարձակալության վարձավճարների ընդհանուր գումարը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքներում գծային մեթոդով: Այն դեպքերում, երբ վարձակալված ակտիվն օգտագործվում է արտադրական նպատակներով վարձավճարները ճանաչվում են արտադրանքի ինքնարժեքում:

բ/ Ֆինանսական վարձակալություն – վարձակալությունը համարվում է ֆինանսական այն դեպքերում, երբ սեփականության իրավունքից ծագող ըստ էության բոլոր էական ռիսկերը և հատույցները փոխանցվում են վարձակալին:

Այն դեպքերում երբ կազմակերպությունը հանդիսանում է ֆինանսական վարձակալության վարձակալ, վարձակալված գույքը ակտիվ է ճանաչվում վարձակալության սկզբի դրությամբ իրական արժեքով, կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե վերջինս ավելի փոքր է: Ակտիվի մաշվածությունը հաշվեզրկվում է հիմնական միջոցների մաշվածության համար նախատեսված մոտեցումներով: Նույն չափով ճանաչվում է նաև համապատասխան պարտավորությունը: Պարտավորության սկզբնական արժեքի և վճարման ենթակա համախառն գումարի տարբերությունը վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում է որպես տոկոսային ծախսում այնպիսի տոկոսադրույքով, որն ապահովում է հատուցման հաստատուն պարբերական դրույք ժամանակաշրջանի սկզբի դրությամբ պարտավորության հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Այն դեպքերում երբ կազմակերպությունը հանդիսանում է ֆինանսական վարձակալության վարձատու, վարձակալված գույքը ապաճանաչվում է, և ճանաչվում է դեբիտորական պարտք վարձակալությունում գուտ ներդրումների չափով: Ֆինանսական վարձակալության հանձնած գույքի հաշվեկշռային արժեքի և վարձակալությունում գուտ ներդրման տարբերությունը ճանաչվում է որպես շահույթ կամ վնաս վարձակալության սկզբին:

Դեբիտորական պարտքի սկզբնական արժեքի և ստացման ենթակա համախառն գումարի տարբերությունը ճանաչվում է որպես տոկոսային եկամուտ այնպիսի տոկոսադրույքով, որն ապահովում է հատուցման հաստատուն պարբերական դրույք ժամանակաշրջանի սկզբի դրությամբ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Վարձակալության ժամկետ է համարվում այն ժամանակահատվածը, որի համար կնքվել է վարձակալության պայմանագիրը և որի համար այն չի կարող չեղյալ համարվել, գումարած այն ժամանակահատվածը, որով վարձակալը կարող է երկարաձգել ակտիվի վարձակալումը լրացուցիչ վճարի դիմաց կամ առանց այդպիսի վճարի այն դեպքում, երբ վարձակալման ժամկետի սկզբում առկա է բավականաչափ համոզմունք առ այն, որ վարձակալը մտադիր է օգտվել այդ իրավունքից:

3.7 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է, հանած համարման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը ներառում է պաշարների ձեռք բերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսումները: Պաշարների ինքնարժեքը որոշվում է՝ ԱՍԱԵ (FIFO) բանաձևով:

3.8 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած կամ հանած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

- փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և որը ցույց է տալիս, թե իրական արժեքի փոփոխության արդյունքում ստացվող օգուտներն ու վնասները պետք է ճանաչվեն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, թե ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընդհանուր առմամբ, Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվի արժեզրկման գնահատումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «ֆինանսական ծախս» և «ֆինանսական եկամուտ» հոդվածներում:

I. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշվող չեն ակտիվ շուկայում: Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվելուց հետո հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և ժամանակին չվճարումը ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

II Մնացորդները դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցներ, բանկային հաշիվների մնացորդներ, որոնք ներկայացված են ֆինանսական ակտիվների «փոխառություններ և դեբիտորական պարտքեր» կատեգորիայում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ֆինանսական պարտավորությունները ներառում են փոխառությունները, ինչպես նաև առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

I Փոխառություններ

Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ ներառյալ գործարքային ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս:

II Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.9 Արժեզրկում

Հիմնական միջոցների

Մաշվող ակտիվները վերանայվում են արժեզրկման համար, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է դրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս՝ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետազայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև դրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ՝ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Հազար դրամ

	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	2,629	2,247
Ընդամենը	2,629	2,247

3.10 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.11 Շահութահարկ

Ընթացիկ հարկն իրենից ներկայացնում է տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի (վնասի) գծով վճարման (փոխհատուցման) ենթակա շահութահարկի գումարը: Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) պետք է չափվեն այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ընկերության հետաձգված հարկերը (հետաձգված հարկային պարտավորությունները և հետաձգված հարկային ակտիվները) պայմանավորված են ժամանակավոր տարբերությունների (հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ) և չօգտագործված հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ: Ժամանակավոր տարբերությունների հետ կապված հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակով օգտագործվող գումարների (հարկային բազայի) ժամանակավոր տարբերությունների վրա:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմնվելով հարկերի այն դրույքների վրա, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են իրացվել չօգտագործված հարկային վնասները և փոխհատուցումները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այն չափով, որքանով այլևս հավանական չէ, որ դրան առնչվող հարկային օգուտները կիրացվեն:

3.12 Պետական շնորհներ

Պետական շնորհները ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ՝ ներկայացվելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պարտավորություններ բաժնում, այն պահին, երբ կա բավարար հավաստիացում, որ կազմակերպությունը ստանալու է շնորհը և բավարարելու է դրան կից պայմանները:

Այն շնորհները, որոնց հիմնական պայմանն է գնել, կառուցել կամ այլ կերպ ձեռքբերել երկարաժամկետ ակտիվ (ակտիվներին վերաբերող շնորհներ), սկզբնապես ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, իսկ հետագայում ճանաչվում են շահույթ/վնասում ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Այլ պետական շնորհները (եկամուտներին վերաբերող շնորհներ) սկզբնապես ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, իսկ հետագայում ճանաչվում են շահույթ/վնասում սխտեմատիկ հիմունքով՝ համապատասխան այն ծախսումների ծախս ճանաչմանը, որոնց փոխհատուցման համար նախատեսված են:

Պետական շնորհները, որոնք տրամադրվում են ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն, պետք է ճանաչվեն շահույթ/վնասում այն պահին, երբ դառնում են ստացման ենթակա:

3.13 Հասույթի ճանաչում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցումների իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրված ցանկացած առևտրական գեղչերը և իջեցումների գումարները:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանի հիման վրա:

4 Հիմնական միջոցներ և Ոչ նյութական ակտիվներ

հազար դրամ

	Արտադրական և տնտեսական գույք	Այլ հիմնական միջոցներ	Համակարգչային ծրագիր	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>				
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,269	2,788	465	4,522
Ավելացում Օտարում և Նվազեցում	-	-	-	-
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,269	2,788	465	4,522
<i>Կուտակված մաշվածություն և արժեզրկում</i>				
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,136	1,912	95	3,143
Տարվա ծախս Նվազեցում	23	468	68	559
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,159	2,380	163	3,702
<i>Հաշվեկշռային արժեք</i>				
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	133	876	370	1,379
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	110	408	302	820

Մաշվածության ծախսը բաշխվել է հետևյալ կերպ՝

հազար դրամ

	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ծառայության ծախսերին	559	1,049
Վարչական ծախսերին	-	-
Ընդամենը	559	1,049

5 Հարկային ակտիվներ

հազար դրամ

	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Նվազագույն շահութահարկ	-	-
Հետաձգված շահութահարկ	172	165
Ընդամենը	172	165

2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ

	2015թ. հունվարի 01-ի դրությամբ	Ճանաչված սեփական կապիտալում	Ճանաչված ֆինանսական արդյունք	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>				
Աշխատակիցների փոխհատուցումների գծով	165	-	7	172
	165	-	7	172
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>				
Փոխառություններ	-	-	-	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	-	-	-	-
	-	-	-	-
Ընդամենը	165	-	7	172

2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ

	2014թ. հունվարի 01-ի դրությամբ	Ճանաչված սեփական կապիտալում	Ճանաչված ֆինանսական արդյունք	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>				
Աշխատակիցներին փոխհատուցումների զժով	183	-	(18)	165
	<u>183</u>	<u>-</u>	<u>(18)</u>	<u>165</u>
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>				
Փոխառություններ Առևտրային կրեդիտորական պարտքեր	-	-	-	-
	-	-	-	-
	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>
Ընդամենը	<u>183</u>	<u>-</u>	<u>(18)</u>	<u>165</u>

6 Այլ ոչ ընթացիկ ակտիվներ

Հազար դրամ

	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տրամադրված փոխառություն Հետաձգված ծախսեր	2,900 62	19,202 73
Ընդամենը	2,962	19,275

7 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ

	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Առևտրային դեբիտորական պարտքեր	628	6,695
Տրված կանխավճարներ	-	77
Այլ դեբիտորական պարտքեր	10	18
Ընդամենը	638	6,790

Առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրելիությունը որոշելիս հաշվի է առնվում պարտքի մարման ժամանակացույցի ցանկացած փոփոխություն՝ սկսած պարտքերի առաջացման պահից մինչև հաշվետու ամսաթիվը:

8 ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

Դրամական հոսքերի հաշվետվությունում ներկայացված դրամական միջոցները և դրա համարժեքները ներառում են հետևյալը.

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հաշիվներ բանկում	6,733	4,013
Կանխիկ դրամ	549	28
Ընդամենը	7,282	4,041

9 Բաժնետիրական կապիտալ

հազար դրամ	2015	2014
Դեկտեմբերի 31-ի դրությամբ 10 հատ հասարակ բաժնետոմսեր՝ 10,000 ՀՀ դրամ յուրաքանչյուրը	100	100
Դեկտեմբերի 31-ի դրությամբ չվճարված բաժնետիրական կապիտալ	-	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնետիրական կապիտալի գուտ գումար	100	100

Ընկերությունը ունի հասարակ բաժնետոմսերի մեկ դաս:

Կանոնադրական կապիտալը լրիվ վճարված է, դրա բաժնեմասերի 100% պատկանում է Ընկերության երկու բաժնետերերին՝

- Խաչիկ Ժորժիկի Բեգլարյան- 50%
- Արթուր Գրիշայի Կիրակոսյան- 50%

10 Պահուստային կապիտալ

Համաձայն Ընկերության կանոնադրության 6.2 կետի՝ «Ընկերությունը ստեղծում է պահուստային կապիտալ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով, որի ձևավորումը իրականացվում է շահույթից կատարվող տարեկան մասհանումների միջոցով՝ մինչև նախատեսված չափին հասնելը: Հատկացումները այդ կապիտալին կատարվում են շահույթից՝ առնվազն 5 տոկոսի չափով: Պահուստային կապիտալի միջոցների ծախսման կարգը սահմանվում է ընդհանուր ժողովի կողմից:

11 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Առևտրային կրեդիտորական պարտքեր	104	49
Հատուցումներ աշխատակիցներին	-	-
Կանխավճարներ հաճախորդներից	-	-
Հարկերի գծով պարտավորություններ՝ բացառությամբ շահութահարկի	1,656	563
Պարտավորություններ Մասնակցին	-	-
Այլ կրեդիտորական պարտքեր	869	837
Ընդամենը	2,629	1,449

12 Հասույթ

հազ.դրամ

	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ծառայություններից հասույթ	65,507	97,463
Ընդամենը	65,507	97,463

13 Վաճառքի ինքնարժեք

հազար դրամ

	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցումներ աշխատակիցներին	10,052	14,800
Մաշվածություն	559	1,049
Ծառայություններ	25,359	43,590
Նյութածախս	4,312	4,849
Այլ	268	380
Ընդամենը	40,550	64,668

14 Վարչական ծախսեր

հազար դրամ

	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցումներ աշխատակիցներին	6,031	5,965
Գործուղման ծախսեր	-	1,203
Այլ	154	87
Ընդամենը	6,185	7,255

15 Այլ ծախսեր

հազար դրամ

	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատակիցներին փոխհատուցումների գծով	36	100
Այլ	5,789	6,224
Ընդամենը	5,825	6,324

16 Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)

հազար դրամ

	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	2,588	3,845
Հետաձգված հարկ	(7)	18
Ընդամենը	2,581	3,863

2015թ. Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը 20 տոկոս է (2014թ.՝ 20%):

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ

	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթը մինչև հարկումը	12,947		19,216	
Շահութահարկի հաշվարկ սահմանված հարկային դրույքով	2,589	20.00	3,843	20.00
Չնվազեցվող / չհարկվող հոդվածներ	(8)	0.10	20	0.10
Շահութահարկի գծով ծախս/ (փոխհատուցում)	2,581	20.10	3,863	20.10

17 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

2016թ. հունվարի 1-ից մինչև սույն հաշվետվության ամսաթիվը Ընկերության ցուցանիշներում նախորդ ժամանակահատվածի համեմատ էական փոփոխություններ չկան:

18 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի և այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք համարվում են ընդունելի տվյալ հանգամանքներում:

Ընկերությունը կատարում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Հաշվապահական գնահատումները, սակայն, երբեմն չեն համապատասխանում իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

*Դեբիտորական պարտքերի և
կանխավճարների վերականգնում*

Դեբիտորական պարտքերի մնացորդը ներառում է նաև պետական բյուջեի հանդեպ ունեցած դեբիտորական պարտքերը: Դեկավարության համոզմամբ պետական բյուջեի հանդեպ ունեցած դեբիտորական պարտքերն ամբողջովին փոխհատուցվող են:

19 Պայմանական պարտավորություններ

19.1 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացրած գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով:

Հայաստանում բիզնեսի կապիտալում օտարերկրյա կապիտալի համեմատաբար փոքրածավալ ներգրավվածության, ինչպես նաև Հայաստանի տնտեսության մեջ համեմատաբար քիչ օտարերկրյա ներդրումների և համաշխարհային տնտեսության համապատասխան սեկտորներից համեմատաբար մեկուսացման արդյունքում, ավելի զարգացած և ձևավորված տնտեսությամբ երկրներում առկա ֆինանսական ճգնաժամը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ այնքան էլ խիստ և նկատելի չէ Հայաստանում:

Այնուամենայնիվ, շուկայական ավելի խիստ ցնցումների պայմաններում Հայաստանի տնտեսությունը, ինչպես նաև Ընկերությունը կարող են ընկնել այդ ճգնաժամի ազդեցության տակ, ինչի հետևանքները կարող են լինել նշանակալի: Ընկերության վրա հնարավոր հետևանքները կարող են ներառել անվճարունակությունը, թուլացած հեղինակությունը, ապրանքների և ծառայությունների վաճառքի, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, դեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ ընկերության ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքների վրա:

Հետևաբար, Ընկերության ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ճշգրտումների ազդեցությունը, եթե այդպիսիք կան, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե ներկա համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը նկատելի և արժանահավատորեն գնահատելի լիներ Հայաստանում:

19.2 Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ պահանջում է մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Դեկավարությունը համոզված է, որ կատարել է համապատասխան հատկացումներ հարկային պարտավորությունների գծով՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա:

19.3 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ընկերությանը բավարարում են ՀՀ կառավարության պահանջները՝ կապված շրջակա միջավայրի հետ և նա չունի պարտավորություններ կապված շրջակա միջավայրի հետ:

19.4 Գործարքներ անձնակազմի հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը՝

հազար դրամ

	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ՝	<u>2,823</u>	<u>2,815</u>